

զգեստնին պիտի չի հպիս. վա՛յ քեզ եթէ լսեմ եւ իմանամ: Աղջկանը կ'իմացնեմ, որ մինչեւ քու նայուածքդ ինձ իմացնէ, զիս մի պարտաւորէր խստութեան: Իմացա՞ր, կրնաս երթալ:

– Լաւ՛, ես յանձն կառնում այդ գոհողութիւնն ըսել եւ այդ գոռոզ հրամանաց զիջանիլ, բայց գոնէ զրուցէ ինձ, ի՞նչ է միտքդ:

– Էհ, շատ երկայն եղաւ այս խօսակցութիւնը եւ դու գիտես թէ քանի մը տարիներ կան ոչ Փիլակրիոսի, ոչ քեզի խորհուրդ հարցնելու պէտք չեմ զգացեր, եւ ոչ իմ մտածութիւնքս յայտնելու:

– Յանցանք իմս էր, որ քեզի պէս գազանի մը յանձնեցի աղջիկը, իբրեւ թէ մարդ կը պակսեր, ըսաւ Թումայ՝ ելաւ եւ սկսաւ երթալ:

– Չրուցէ ինչ որ կ'ուզես, բայց մի՛ մոռնար իմ պատուերս, զի վերջը կը գոջաս...

Իսկ երբ եղբայրն անհետ եղաւ, իր գոռոզ գլուխը շարժելով կ'ըսեր ինքնիրեն.  
«Յիմարնե՛ր, չեն իմանար թէ երբ իմ ապագան կ'ապահովեմ, իրենցն ապահոված կը լինիմ»: